Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-886[1]-28.10.2015,07.12.2015-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (1 հուլիսի 1998 թվականի) (այսուհետ՝ Օրենսգիրք) 118-րդ հոդվածը՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 և 1.2 մասերով՝

«1.1 Գրավի առարկա իրեղեն ապացույցները և գրավի առարկա առգրավված այլ առարկաները վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ հետ են վերադարձվում դրա օրինական տիրապետողին բոլոր քննչական գործողությունները կատարելուց հետո, եթե դա չի վնասում պատշաճ ապացուցմանը:»:

«1.2 Կալանքի տակ գտնվող իրեղեն ապացույցների կալանքից ազատելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքի 238-րդ հոդվածի 1.1 մասով»:

Հոդված 2. Օրենսգրքի 238-րդ հոդվածը լրացնել 1.1 մասով հետեվյալ բովանդակությամբ՝

«1.1 Գրավի առարկան կալանքի տակ լինելու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը գրավառուի միջնորդությամբ կայացնում է որոշում այդ գույքը իրացնելու նպատակով կալանքից ազատելու մասին, եթե գրավի առարկան չի հանդիսանում՝

ա) հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք.

բ) ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույք.

գ) քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման համար անհրաժեշտ գույք, որի նկատմամբ գրավի կամ սեփականության իրավունքը երրորդ անձինք դատական կարգով վիճարկում են:

Գրավառուի պահանջները բավարարելուց ու գույքի իրացման ծախսերը նվազեցնելուց հետո մնացած միջոցները գրավառուն փոխանցում է քրեական վարույթ իրականացնող մարմնի դեպոզիտ:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ամփոփաթերթ
«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

N	Առաջարկության հեղինակը	հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	առաջարկությունը	Առաջարկության վերաբերյալ եզրակացությունը
ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ				
1	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահրամ Մկրտչյան	նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 330.1 հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ օրենքով ծանուցման պարտադիր կարգ նախատեսված չլինելու դեպքում իրավաբանական անձինք և արժեթղթեր թողարկողները կարող են համապատասխանաբար կանոնադրությամբ կամ արժեթղթերի թողարկման ազդագրով նախատեսել ծանուցման պարտադիր կարգ: Սակայն նախագծով իրավաբանական անձանց համար չեն սահմանվում այնպիսի պահանջներ, որոնք, հաշվի առնելով, իրավաբանական անձինք իրենց կանոնադրություններում կնախատեսեն ծանուցման պարտադիր կարգ: Խնդրի բուն էությունը կայանում է նրանում, որ «ծանուցման պարտադիր կարգ» հասկացությունն իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից ոչ հստակ է շարադրված և կարող է անհարկի լայն մեկնաբանման առիթ հանդիսանալ: Արդյունքում կլինեն այնպիսի իրավաբանական անձինք (այդ թվում՝ բանկեր, վարկային կազմակերպություններ), որոնք օրենքի ընդունումից հետո համապատասխան փոփոխություններ կկատարեն իրենց կանոնադրություններում՝ նախատեսելով ծանուցման այնպիսի կարգ, որոնք դուրս են «պատշաճ ծանուցման» օրենսդրական հասկացության սահմաններից: Նախագծի 2-րդ հոդված, գլուխ 20.1, հոդված 330.1 1-ին և 2-րդ մասերում իրավաբանական անձանց համար սահ-	«Ծանուցման պարտադիր կարգ» հասկացությունը որոշակիացվել է: Միևնույն ժամանակ նշենք, որ նման կարգավորման իմաստը կայանում է հետևյալում՝ նոր կարգավորումը քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցներին տալիս է ազատություն իրենց համար նախընտրելի միմյանց ծանուցման ձև ու կարգ սահմանելու այն դեպքում, երբ օրենքները չեն սահմանում, որ կոնկրետ դեպքում ծանուցումը պետք է կատարվի այդ օրենքով սահմանված կարգով:

			մանել այնպիսի պահանջներ, որոնք հիմք կհանդիսանան, որպեսզի իրավաբանական անձինք իրենց կանոնադրություններում փոփոխություններ նախաձեռնելիս դուրս չգան «պատշաճ ծանուցում» օրենսդրական հասկացությունների շրջանակներից:	
2	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահրամ Մկրտչյան		3-րդ մասի վերջում ավելացնել «, եթե այն կատարվել է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, առձեռն փոխանցման, իսկ դրա անհնարինության դեպքում՝ օրենքով սահմանված հրապարակային եղանակով» բառերը:	Տես սույն տեղեկանքի 1-ին կետի հիմնավորումը:
3	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան	նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը տեղափոխել 12-րդ հոդված՝ պահպանելով ՀՀ քաղ. Օր.ի լրացվող և փոփոխվող հոդվածների հերթականությունը:	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածը տեղափոխվել է 12-րդ հոդված:
4	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան	նախագծի 2-րդ հոդված	Սահմանել ՀՀ քաղ. Օր.-ով նախատեսված ծանուցումների (տեղեկացումների) միասնական կարգ՝ Նախագծի 2-րդ հոդվածը համապատասխանեցնելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված ծանուցման կարգին: Միաժամանակ սահմանել, որ միասնական ծանուցման կարգը պարտադիր է նաև այն դեպքերում, երբ պայմանագրով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ նախատեսված է ծանուցման այլ կարգ, ընդ որում՝ այդ կարգը կարող է միայն լրացնել ծանուցման միասնական կարգը կամ սահմանել ծանուցման այլ ձևեր, որոնք պետք է ընդգրկված լինեն ծանուցման միասնական կարգի շրջանակում:	Տես սույն տեղեկանքի 1-ին կետի հիմնավորումը:
5	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան	նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում «կետ» բառը փոխարինել «մաս» բառով և նույն փոփոխությունը կատարել նախագծի մյուս հոդվածներում՝ համապատասխանեցնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:	Ընդունվել է: «Կետ» բառերը փոխարինվել են «մաս» բառերով:
6	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան	նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետում «Ազդագրի» բառը փոխարինել «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ազդագրի» բառերով, քանի որ ՀՀ	Ընդունվել է:

			քաղ. Օր.-ով ազդագրի հասկացություն սահմանված չէ:	
7	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան	նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մաս	Հաշվի առնելով, որ նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասով կատարվող լրացմամբ ՀՀ քաղ. Օր.ի 236-րդ հոդվածի 3-րդ մասը ունենում է հետևյալ շարադրանքը՝ «Հաջորդող գրավի դեպքում նոր գրավառուի պահանջները բավարարվում են գրավի առարկայի արժեքից նախորդ գրավառուի պահանջները բավարարելուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նոր և նախորդ գրավառուների միջև կնքված պայմանագրով:», առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասում «Պարտապանի» բառը փոխարինել «Եթե նոր և նախորդ գրավառուների միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա պարտապանի» բառերով: Այս առաջարկությամբ նաև լուծվում են այն խնդիրները, որոնք, մեր կարծիքով, կարող են առաջանալ, օրինակ՝ երկուսից ավելի գրավառուների առկայության կամ հաջորդ գրավառուների նկատմամբ գրավատուի ավելի մեծ չափի պարտավորություն ունենալու դեպքերում:	Ընդունվել է: Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ կետի սկզբում լրացվել է «Եթե բոլոր նոր և նախորդ գրավառուների միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ» բառերը: Այդ կետի վերջում լրացվել է հետևյալ դրույթը՝ «Մի քանի նախորդ գրավառուների առկայության դեպքում նոր գրավառուն պարտավոր է պարտապանի կողմից իր հանդեպ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում գրավի առարկայի բռնագանձման գործընթաց սկսելուց առաջ սույն հոդվածով սահմանված կարգով տեղեկացնել իրենից նախորդող բոլոր նախորդ գրավառուներին և առաջնորդվել սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ կետերով նախատեսված իրավունքների իրականացման վերաբերյալ նախորդ գրավառուների կայացրած որոշմամբ ըստ նախորդ գրավառուների հաջորդականության»:
8	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան	նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերության առաջին նախադասությունում «տեղեկացնել» բառը փոխարինել «ծանուցել» բառով, երկրորդ նախադասությունում «Տեղեկացումը» բառը փոխարինել «Ծանուցումը» բառով, իսկ նույն մասի երկրորդ պարբերության «տեղեկացնել» բառը փոխարինել «ծանուցել» բառով:	Ընդունվել է: 4-րդ հոդվածի 4-րդ մասում «տեղեկացնել» բառը փոխարինվել է «ծանուցել բառով՝ իր բոլոր հոլովներով:
9	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր	նախագիծի ողջ տեքստում	Սույն առաջարկությունների 1-ին կետով ներկայացված ծանուցումների միասնական կարգ	Տես սույն ամփոփաթերթի 1-ին կետը:

	Հովհաննես Սահակյան		սահմանվելու դեպքում, ՀՀ քաղ. Օր-ի մյուս հոդվածներում նախատեսված այն դեպքերում, երբ նախատեսված է տեղեկացում, սակայն այլ օրենքներով նախատեսված չէ այդ տեղեկացման կարգը՝ «տեղեկացում» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «ծանուցում» բառերով, հաշվի առնելով, որ նշված դեպքերում տեղեկացումը առաջացնում է իրավական հետևանքներ:	
10	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան	նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետ	Նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 243.1 հոդվածի 1-ին մասում «(այսուհետ՝ սույն հոդվածով Սահմանափակում)» բառերը փոխարինել «(սույն հոդվածում այսուհետ՝ Սահմանափակում)» բառերով:	Ընդունվել է:
11	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան	նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետ	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) լրացնել նոր 1.1 մաս հետևյալ բովանդակությամբ. «1.1 Եթե գույքը հանդիսանում է հաջորդող գրավի առարկա, ապա նոր գրավառուն իրավասու է սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ բռնագանձել և իրացնել գրավի առարկան՝ բացառապես սույն օրենսգրքի 236-րդ հոդվածով սահմանված կարգով:»	Ընդունվել է: Այդ հոդվածի վերջում լրացվել է 6-րդ մաս առաջարկվող բովանդակությամբ:
12	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան	նախագծի 5-րդ հոդվածին հաջորդող հոդվածներ	Փոխել նախագծի 6-րդ հոդվածի և հա-ջորդող հոդվածների համարակալումները:	Ընդունվել է:
13	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան	նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածում «մարված» բառը փոխարինել «չմարված» բառով:	Գրավառուի կողմից սույն գլխով սահմանված կարգով գրավի առարկան ի սեփականություն վերցնելու օրվանից գրավով ապահովված պարտավորության **մարված** չափի նկատմամբ որևէ տոկոս կամ տուժանք չի կիրառվում, քանի որ պրակտիկայում բանկերի մոտ տարընկալում է այն դրույթը, որի համաձայն գրավի առարկան իրացված է համարվում ի սեփականություն վերցնելուց հետո 6 ամսվա ընթացքում: Անձի գույքը պարտքի դիմաց վերցնելով ի

				սեփականություն՝ անձի պարտավորությունը բանկը չի համարում մարված և տույժեր է գանձում, ինչը չի համապատասխանում հոդվածի էությանը:
14	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան	նախագծի 12-րդ հոդված	Նախագծի 12-րդ հոդվածում «հրապարակմանը» բառը փոխարինել «հրապարակման օրվան» բառերով և նույն փոփոխությունը կատարել փաթեթի մյուս նախագծերում:	Ընդունելի է:
«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ				
15	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան	ՀՀ օրենքի նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 50-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ հղում է արվել ՀՀ քաղ. Օր.-ի 236-րդ հոդվածին: Առաջարկում ենք քննարկել նաև սույն օրենսդրական նախաձեռնությամբ լրացվող՝ ՀՀ քաղ. Օր.-ի 243.1 հոդվածին հղում անելու հարցը, քանի ու այն վերաբերվում է գրավ դրված գույքի վրա գրավատուի՝ երրորդ անձանց նկատմամբ ունեցած այլ պարտավորությունների կատարման համար կիրառվող սահմանափակումներին և գրավ դրված գույքի նկատմամբ սահմանափակումներ կիրառված լինելու դեպքում գրավ դրված գույքի իրացումից հետո մնացած դրամական միջոցների վրա այդ սահմանափակումների տարածմանը և դրա հետ կապված այլ հարցերը:	Ընդունվել է: Նշված հղումը հանվել է նախագծից:
16	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան		Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 50-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության 2-րդ նախադասությամբ՝ դատական կարգով պարտավորության վաղաժամկետ կատարման մասին պահանջը սահմանված կարգով բավարարվելու դեպքում գրավառուի՝ այդ գույքի արժեքից պահանջը բավարարվում է առաջնահերթ, ինչի կապակցությամբ առաջանում են մտահոգություններ այն առումով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով չի նախատեսված, որ գրավառուն կարող է դատական կարգով պահանջել վաղաժամկետ կատարելու գրավով ապահովված պարտավորությունը այլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 246-րդ հոդվածը հստակ սահմանում է այն հիմքերը,	Ընդունվել է: Նախագծի 4-րդ կետով փոփոխվել է 246-րդ հոդվածի 2-րդ կետը:

			որոնց առկայության դեպքում գրավառուի մոտ առաջանում է պարտավորության վաղաժամկետ կատարման պահանջի իրավունքը, ընդ որում դատական կարգի մասին ոչինչ նշված չէ: Այս առումով հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 3-րդ մասը, առաջարկում ենք նման տարանջատում տալու դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանել նաև այն դեպքերը, երբ գրավառուի համար պարտավորությունների վաղաժամկետ կատարման պահանջի իրավունքը ծագում է դատարան դիմելու միջոցով: Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ թե՛ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (226-հոդված,3-րդ մաս, 243 հոդված 2-րդ մաս), թե «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը (հոդված 69.2-րդ մաս) ամրագրել են, որ առաջին հերթին բավարարվում են պարտապանի գույքի գրավով ապահովված պահանջները	
17	ՀՀ կառավարություն	նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն հոդվածով նախատեսված իր գործողությունների մասին գրավառուն պարտավոր է հարկադիր կատարողին տեղեկացնել հարկադիր կատարողի ծանուցումը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում»:	Ընդունվել է:
18	ՀՀ կառավարություն	նախագծի 2-րդ հոդված	«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 50. Գրավ դրված գույքի բռնագանձում տարածելը. 1. Պարտապանի գույքի գրավով չապահովված պահանջները բավարարելու համար պարտապանի գրավ դրված գույքի վրա բռնագանձում կարող է տարածվել միայն պարտապանի այլ գույքի բացակայության դեպքում: Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում հարկադիր կատարողը ծանուցում է գրավառուին դատարանի վճռի, կատարողական թերթի, գրավադրված գույքի վրա արգելանք դնելու որոշման և գրավատուի չմարված պարտավորությունների չափի մասին:	Ընդունվել է:

			Պարտապանի գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելու դեպքում, գրավառուն իրավունք ունի պահանջելու գրավով ապահովված պարտավորության վաղաժամկետ կատարում: Դատական կարգով պարտավորության վաղաժամկետ կատարման մասին պահանջը սահմանված կարգով բավարարվելու դեպքում գրավառուի՝ այդ գույքի արժեքից պահանջը բավարարվում է առաջնահերթ: Արտադատական կարգով վաղաժամկետ կատարման կամ գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու պահանջ (բռնագանձման ծանուցում) ներկայաց-ված լինելու կամ ներկայացվելու դեպքում, գրա-վառուի՝ այդ գույքի արժեքից պահանջը ևս բավարարվում է առաջնահերթ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում՝ վերջինիս դեպքում գրավառուն իրավասու է ինքնուրույն և իր հայեցողությամբ բռնագանձում տարածել այդ գույքի նկատմամբ և իրացնել այն, այդ թվում երրորդ անձին ի սեփականություն հանձնել՝ պարտավորության նկատմամբ առաջացած դրական մնացորդի նկատմամբ ապահովելով ՀՀ օրենսդրության պահանջների կատարումը: Գրավի առարկայի իրացման և գրավով ապահովված պարտավորությունների բավարարման արդյունքում մնացած գումարի վրա բռնագանձում է տարածվում ՀՀ քաղ. Օր.-ի 243.1 հոդվածով սահմանված կարգով: 2.Եթե պարտապանի գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելու դեպքում գրավառուն չի պահանջում գրավով ապահովված պարտավորության վաղաժամկետ կատարում, ապա գույքի հարկադիր աճուրդից հետո նոր սեփականատիրոջն են անցնում նախկին գրավատուի պարտավորությունները, իսկ գույքը համարվում է գրավ դրված գրավառուի մոտ: 3.Սույն հոդվածով նախատեսված իր գործո-ղությունների մասին գրավառուն պարտավոր է հարկադիր կատարողին տեղեկացնել հարկադիր կատարողի ծանուցումը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում»:	

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ				
19	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան		Հաշվի առնելով, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «սույն օրենքով սահմանվում է են գույքի նկատմամբ իրավունքների, իրավունքների սահմանափակումների (այսուհետ՝ սահմանափակումներ) պետական գրանցման, գույքի, դրա նկատմամբ իրավունքների, սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, գրանցում իրականացնող մարմնի իրավունքների և պարտա-կանությունների իրավական հիմքերը, գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափա-կումների պետական գրանցման վարույթի առանձնահատկություններ», կարծում ենք, որ ներկայացված առաջարկությունները և փոփոխությունները՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում կատարելու համար անհրաժեշտություն կառաջանա նաև փոփոխություններ և լրացումներ կատարել այդ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում, քանի որ դրանից չի բխում հաջորդող գրավի առարկայի բռնագանձման գործընթացը սկսելու, դադարեցնելու կամ ավարտելու վերաբերյալ գրավառուի կողմից անշարժ գույքի պետական ռեգիստրին տեղեկություններ ներկայացնելու և դրանք անշարժ գույքի իրա-վական կադաստրի տեղեկատվության կազմում արտացոլելու հետ կապված հարաբերությունները: Միաժամանակ՝ միասնականության ապահովման նպատակով, առաջարկում ենք լրացվող հոդվածում հստակ նշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այն գլուխը, հոդվածը, որի հիման վրա բռնագանձման գործընթացն իրականացվելու է, ինչպես դա ներկայացված է նախագծի 2-րդ հոդվածում: Եթե «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքը կարգավորում է հիփոթեքի առարկայի նկատմամբ	Ընդունվել է: Նախագծով սահմանվել է, որ ընդհանրապես գրավի բռնագանձման գործընթացը սկսելու, դադարեցնելու կամ ավարտելու վերաբերյալ տեղեկատվություն է ար-տացոլվում կադաստրում:

			առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով իրավունքների պետական գրանցման, իրավունքի դադարման պետական գրանցման և գրանցված իրավունքի պետական գրանցումը չեղարկելու, հիփոթեքի դադարման պետական գրանցման հարաբերությունները,ապա նպատակահարմար չէ արդյո՞ք «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով ի սկզբանե կարգավորել գրավի առարկայի բռնագանձման գործընթացը սկսելու, դադարեցնելու կամ ավարտելու վերաբերյալ գրավառուի կողմից անշարժ գույքի պետական ռեգիստրին տեղեկություններ ներկայացնելու և դրանք անշարժ գույքի իրավական կադաստրի տեղեկատվության կազմում արտացոլելու հետ կապված հարաբերությունները, իսկ այնուհետև՝ անդրադառնալ հաջորդող գրավին:	
20	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան	օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մաս	Հաշվի առնելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասը, ըստ որի՝ այդ օրենքով սահմանված նորմերը չեն տարածվում «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» և «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված ապահովված հիփոթեքային պարտատոմսերի և ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման նպատակով գրավադրվող ակտիվների նկատմամբ գրավի իրավունքի գրանցման հետ կապված հարաբերությունների վրա, առաջարկում ենք քննարկել նաև նշված մասը խմբագրելու կամ հանելու նպատակահարմարության հարցը, քանի որ նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 41.1-ին հոդվածը վերաբերվում է «Ազդագրի հիման վրա հիփոթեքով ապահովված արժեթղթերի թողարկման գործընթացում պետական գրանցման առանձնահատկություններին»	«Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» և «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված ապահովված հիփոթեքային պարտատոմսերի և ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման առանձնահատկությունները սահմանվում են առանձին օրենքներով, ուստի, առաջարկում ենք այդ նորմի փոփոխություն չիրականացնել, քանի որ այդ օրենքներով գրանցման ենթակա են ոչ թե անշարժ գույքը, այլ դրա վերաբերյալ արժեթղթերը, որոնց նկատմամբ իրավունքների գրանցման գործընթացներն ու պայմաններն այլ են:
21	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես		Առաջարկվող գրավի առարկայի բռնագանձման գործընթացը սկսելու, դադարեցնելու կամ ավարտելու վերաբերյալ գրավառուի կողմից	Ընդունվել է: Նշված դրույթը տարածվել է ընդհանրապես գրավի, այլ ոչ

	Սահակյան		անշարժ գույքի պետական ռեգիստրին տեղեկություններ ներկայացնելու և դրանք անշարժ գույքի իրավական կադաստրի տեղեկատվության կազմում արտացոլելու վերաբերյալ առաջարկն ընդունվելու դեպքում անհրաժեշտություն կառաջանա նաև համապատասխան հոդվածներում սահմանել այդ տեղեկատվության տրամադրման համար՝ 1000 դրամ վճար:	հաջորդող գրավի բռնագանձման գործընթացի վրա:
22	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան		«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» « օրենքում կատարել փոփոխություն՝ ուժը կորցրած ճանաչելով 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը:	Այդ հոդվածն ուժը կորցրած է ճանաչված:
«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ				
23	ՀՀ կառավարություն	նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ կերպ «Իրեղեն ապացույցը վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ հետ է վերադարձվում դրա օրինական տիրապետողին բոլոր քննչական գործողությունները կատարելուց հետո, եթե դա չի վնասում պատշաճ ապացուցմանը: Իրեղեն ապացույցը հետ վերադարձնելու մասին որոշման կայացման պահից այդ առարկայի նկատմամբ վարույթն իրանացնող մարմնի որոշմամբ կիրառված սահմանափակումները դադարում են:	Ընդունվել է: